ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Երևանի պետական համալսարանի
Կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի
2026 թ. մայիսի 12-ին կայացած թիվ 12 նիստի

Կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի 2026 թ. մայիսի 12-ին կայացած թիվ 12 նիստին գիտական խորհրդի 32 անդամներից ներկա էին 26-ը: Նիստին մասնակցում էր նաև ԵՊՀ գիտական քարտուղար Մերի Հովհաննիսյանը: ԵՊՀ գիտքարտուղարը նշեց, որ հաշվի առնելով այն հանգամանքը որ, ԵՊՀ Կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի նախագահ, կենսաբանության ֆակուլտետի դեկան կ.գ.դ., դոցենտ Կ.Ա. Ղազարյանը մեկնել է գործուղման և ըստ ԵՊՀ-ի կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության օրինակելի կանոնակարգի, անհրաժեշտ է առաջադրել տվյալ նիստի համար նախագահողի թեկնածություն: Մ. Հովհաննիսյանի կողմից առաջարկվեց «Կենսաբանություն» ԳՀԻ տնօրեն, կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի պրոֆեսոր, կ.գ.դ. Կարեն Թոչունյանի թեկնածությունը:

Գիտական խորհրդի անդամների համաձայնությամբ Կարեն Թոչունյանի թեկնածությունը դրվեց բաց քվեարկության և քվեարկությունը անցավ միաձայն:

Հաջորդիվ Կ. Թոչունյանի կողմից ներկայացվեց նիստի օրակարգը, որը դրվեց քվեարկության և հաստատվեց միաձայն:

ՕՐԱԿԱՐԳ՝

1. ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ու գենետիկայի և բջջաբանության ամբիոնների պրոֆեսորադասախոսական կազմի թափուր պաշտոնները համալրելու նպատակով բաց մրցութային ընտրության հարցը:
2. ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի «Մասնագիտական վերապատրաստում-2025» մրցույթի շրջանակում իրականացվող Տաթևիկ Լեոնիկի Հարությունյանի «Որոշ ձեռքաթևավորների բիոակուստիկ և վարքագծային առանձնահատկությունների ուսումնասիրությունը» 25PTS-1F017 ծածկագրով նախագծի հաշվետվության հարցը:
3. Ընթացիկ հարցեր:

1. ԼՍԵՑԻՆ՝ ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ու գենետիկայի և բջջաբանության ամբիոնների պրոֆեսորադասախոսական կազմի թափուր պաշտոնները համալրելու նպատակով բաց մրցութային ընտրության հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ նիստի նախագահող՝ «Կենսաբանություն» ԳՀԻ տնօրեն, կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի պրոֆեսոր, կ.գ.դ. Կարեն Թոչունյանը, Կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի մրցութային հանձնաժողովի անդամ կ.գ.դ. Մարինե Փարսադանյանը:

Կ. Թոչունյանը հայտնեց, որ վերոհիշյալ ամբիոնների պրոֆեսորադասախոսական կազմի թափուր պաշտոնները համալրելու նպատակով դիմել են՝գենետիկայի և բջջաբանության ամբիոնի պրոֆեսորի (հիմնական, 0.75 դրույք) թափուր պաշտոնի տեղակալման համար՝ կ.գ.դ., պրոֆեսոր Գալինա Գեորգիի Հովհաննիսյանը; կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի դոցենտի (հիմնական, 1.0 դրույք) պաշտոնի տեղակալման համար՝ կ.գ.դ., դոցենտ Սեդա Վիկտորի Մարությանը; կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի դոցենտի (հիմնական, 0.75 դրույք) պաշտոնի տեղակալման համար՝ կ.գ.թ., դոցենտ Լիլիթ Սերգեյի Գաբրիելյանը; կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի դոցենտի (հիմնական, 0.75 դրույք) պաշտոնի տեղակալման համար՝ կ.գ.թ., դոցենտ Ինգա Լևոնի Բազուկյանը:

Կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի մրցութային հանձնաժողովի անդամ, կ.գ.դ. Մ. Փարսադանյանը ծանոթացրեց գիտական խորհրդի անդամներին թեկնածուների անձնական գործերին: Նա նշեց որ, «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի որակավորման մանդատային հանձնաժողովը որոշել է թույլատրել հավակնորդներին մասնակցելու պրոֆեսորադասախոսական կազմի թափուր պաշտոնները համալրելու նպատակով հայտարարված մրցույթին՝ հայցվող պաշտոններում նրանց դիմումները Կարգի պահանջներին համապատասխանելու հիմնավորմամբ:

Նիստի ժամանակ մրցութային հանձնաժողովը ներկայացվեց պրոֆեսոր, կ.գ.դ. Գալինա Գեորգիի Հովհաննիսյանի, դոցենտներ կ.գ.դ. Սեդա Վիկտորի Մարությանի, կ.գ.թ. Լիլիթ Սերգեյի Գաբրիելյանցի և կ.գ.թ. Ինգա Լևոնի Բազուկյանի գիտամանկավարժական ակտիվ գործունեությունը, համապատասխան ամբիոնների կարծիքները, պրոֆեսորադասախոսական անձնակազմի բաց քվեարկության արդյունքները, ինչպես նաև կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի մրցութային հաձնաժողովի եզրակացությունները:

ՈՐՈՇԵՑԻՆ. ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի գենետիկայի և բջջաբանության ամբիոնի պրոֆեսորի 0.75 դրույքաչափով թափուր պաշտոնում կ.գ.դ., պրոֆեսոր Գալինա Գեորգիի Հովհաննիսյանի, կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի դոցենտի 1.0 դրույքաչափով թափուր պաշտոնում կ.գ.դ., դոցենտ Սեդա Վիկտորի Մարությանի և դոցենտի 0.75 դրույքաչափով թափուր պաշտոններում նույն ամբիոնի դոցենտներ Լիլիթ Սերգեյի Գաբրիելյանի և Ինգա Լևոնի Բազուկյանի թեկնածությունները դնել փակ գաղտնի քվեարկության և ընտրել հաշվիչ հանձնաժողով:

Բաց քվեարկությամբ ընտրվեց հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով՝ Արա Պետիկի Անտոնյան (նախագահ)՝ ԵՊՀ կենսաֆիզիկայի ամբիոնի դոցենտ, կ.գ.դ., Անժելա Աշոտի Սարգսյան՝ ԵՊՀ գենետիկայի և բջջաբանության ամբիոնի վարիչ, ասիստենտ, կ.գ.թ., Լիլիթ Գնելի Գրիգորյան՝ ԵՊՀ ասպիրանտ:

ԼՍԵՑԻՆ՝ Փակ գաղտնի քվեարկություն անցկացնելուց հետո հաշվիչ հանձնաժողովի նախագահ Ա. Պ. Անտոնյանի հաղորդումը քվեարկության արդյունքների մասին:

Քվեարկությանը մասնակցել են ֆակուլտետի գիտական խորհրդի 26 անդամներ:

Բաժանվել է 26 քվեաթերթիկ:

Քվեատուփում առկա է 26 քվեաթերթիկ:

Ստորև ներկայացված են «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կենսաբանության ֆակուլտետի գենետիկայի և բջջաբանության ու կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնների թափուր պաշտոնների համալրման քվեարկության արդյունքները:

Գենետիկայի և բջջաբանության ամբիոնի պրոֆեսորի թափուր պաշտոնի հավակնորդի քվեարկության արդյունքները

N	Ազգանուն, անուն, հայրանուն	Դրույքաչափ	Կողմ	Դեմ	Անվավեր
1.	Հովհաննիսյան Գալինա Գեորգիի	0,75 դրույք	24	0	2

Կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի դոցենտի թափուր պաշտոնների հավակնորդների քվեարկության արդյունքները

N	Ազգանուն, անուն, հայրանուն	Դրույքաչափ	Կողմ	Դեմ	Անվավեր
2.	Մարության Սեդա Վիկտորի	1դրույք	24	0	2
3.	Գաբրիելյան Լիլիթ Սերգեյի	0,75 դրույք	25	0	1
4.	Բազուկյան Ինգա Լևոնի	0,75 դրույք	25	0	1

Փակ (գաղտնի) քվեարկության արդյունքներով **Գալինա Գեորգիի Հովհաննիսյանը** ընտրվել է կենսաբանության ֆակուլտետի գենետիկայի և բջջաբանության ամբիոնի պրոֆեսորի պաշտոնում: **Սեդա Վիկտորի Մարությանը, Լիլիթ Սերգեյի Գաբրիելյանը** և **Ինգա Լևոնի Բազուկյանը** ընտրվել են կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի դոցենտների պաշտոններում:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հաստատել ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկության արդյունքները,

2. Փակ /գաղտնի/ քվեարկության արդյունքներով կ.գ.դ., պրոֆեսոր Գալինա Գեորգիի Հովհաննիսյանին համարել ընտրված ԵՊՀ գենետիկայի և բջջաբանության ամբիոնի պրոֆեսորի (0,75 դրույք) պաշտոնում:

Փակ /գաղտնի/ քվեարկության արդյունքներով կ.գ.թ., դոցենտ Սեդա Վիկտորի Մարությանին համարել ընտրված ԵՊՀ կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի դոցենտի (1 դրույք) պաշտոնում:

Փակ /գաղտնի/ քվեարկության արդյունքներով կ.գ.թ., դոցենտ Լիլիթ Սերգեյի Գաբրիելյանին համարել ընտրված ԵՊՀ կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի դոցենտի (0,75 դրույք) պաշտոնում:

Փակ /գաղտնի/ քվեարկության արդյունքներով կ.գ.թ., դոցենտ Ինգա Լևոնի Բազուկյանին համարել ընտրված ԵՊՀ կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի դոցենտի (0,75 դրույք) պաշտոնում:

2. ԼՍԵՑԻՆ՝ «Կենսաբանություն» ԳՀԻ Կենդանիների էվոլյուցիայի և զոոնոզ հիվանդությունների ուսումնասիրության լաբորատորիայի Վայրի կենդանիների հիվանդությունների ուսումնասիրման խմբի կրտսեր գիտաշխատող, առկա ուսուցմամբ ասպիրանտ Տաթևիկ Լեոնիկի Հարությունյանի ՀՀ ԿԳՄՄՆ ԳԿ «Մասնագիտական վերապատրաստում 2025» մրցույթի շրջանակներում իրականացվող «Որոշ ձեռքաթևավորների բիոակուստիկ և վարքագծային առանձնահատկությունների ուսումնասիրությունը» 25PTS-1F017 ծածկագրով նախագծի հաշվետվության հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ «Կենսաբանություն» ԳՀԻ տնօրեն, կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի պրոֆեսոր, կ.գ.դ. Կարեն Թռչունյանը, կրտսեր գիտաշխատող, ասպիրանտ Տաթևիկ Հարությունյանը: Վերջինս նշեց, որ մասնագիտական վերապատրաստումը իրականացվել է պրոֆեսոր Միրիամ Կնորնշիլդի ղեկավարությամբ Գերմանիայի Բեռլինի բնության պատմության թանգարանի էվոլյուցիոն էթոլոգիայի լաբորատորիայում: Վերապատրաստման ընթացքում իրականացվել է ձևաբանորեն նման (կրիպտիկ) ձեռքաթևավորների ակուստիկ տարբերակում, օգտագործելով ակուստիկ վերլուծություններ և բազմաչափ վիճակագրական մոդելավորում, ինչը կարելի է դիտարկել որպես գիտական նորույթ: Վերապատրաստման ընթացքում իրականացվել է տվյալների փուլային մշակում SonoChiro և Kaleidoscope Pro ծրագրերով, այնուհետև Avisoft-SASLab Pro ծրագրի միջոցով 35 ակուստիկ պարամետրերի մանրակրկիտ չափում: R միջավայրում կիրառված հիմնական բաղադրիչների վերլուծությունը (PCA, KMO = 0.72), Welch's t-tests-ը (FDR ուղղմամբ), ինչպես նաև գծային դիսկրիմինանտ վերլուծությունը (LDA) թույլ են տալիս հաստատել տեսակների միջև հստակ ակուստիկ տարբերակվածություն՝ 95% ճշգրտությամբ, որտեղ ամենահուսալի գործոն է սահմանվել ձայնի տևողությունը: Հետազոտության արդյունքներն ունեն ռազմավարական նշանակություն կենսաբազմազանության ոչ ինվազիվ մոնիթորինգի համար և հիմք են հանդիսացել միջազգային բարձր վարկանիշ (Q1) ունեցող ամսագրում տպագրվող գիտական հոդվածի, ինչպես նաև Բեռլինի լաբորատորիայի հետ շարունակական համագործակցության և Հայաստանի ձեռքաթևավորների ձայնային ազդանշանների թվային գրադարանի ստեղծման համար:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ վերոհիշյալ թեմայի օրացուցային պլանով նախատեսված աշխատանքները համարել ավարտված:

Գիտական խորհրդի նիստը նախագահող, կ.գ.դ., պրոֆեսոր՝ **Կ.Ա. Թռչունյան**

Գիտական խորհրդի քարտուղար, կ.գ.թ., դոցենտ՝ **Ի.Գ. Շահազիզյան**